ՍԱԼՎԻՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆ
(ՀՀ ԳԱԱ ՀԱԻ)

ՊՈԼՍԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XIX ԴԱՐՈՒՄ

XIX դարը բախտորոշ մի ժամանակաշրջան էր Օսմանյան կայսրության համար՝ իր նշանակալից իրադարձություններով, սոցիալ-քաղաքական նոր գործընթացներով, գաղափարական պայքարի անխախադեպ դրսևորումներով:

XIX դարում Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը շարունակում էր մնալ արևմտահայության քաղաքական, հոգևոր-մշակութային և հասարակական կյանքի կենտրոնը: Կ. Պոլսի հայության կյանքը ընթանում էր հակասություններով և քաղաքական տարուբերումներով լի պայմաններում, որոնք շատ դեպքերում ուղղակի խոչընդոտում էին նրա առաջընթացը թե՛ տնտեսական, և թե՛ հասարակական-մշակութային ասպարեզներում:

Գաղթօջախը գնալով ընդարձակվում էր Արևմտյան Հայաստանի բնակչության հաշվին՝ ստվարանում էր բնակչության թիվը: XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին Կ. Պոլիսն ուներ մոտ 860 հազար բնակիչ, որից 374 հազարը մահմեդականներ էին, 152 հազարը՝ հույներ, 150 հազարը՝ հայեր, 44 հազարը հրեաներ և այլ ազգեր[1]: Արդեն 1840-ական թթ. մայրաքաղաքի հայերի թիվը հասնում էր 205 հազարի[2]:

Կ. Պոլիսն ուներ 36 թաղամաս: Հայերը զբաղեցնում էին ծայրամասային 20 թաղամասերի կեսից ավելին: Հայաշատ էին Սկյուտարը, Պալաթը, Ենի Գափուն, Կետիկ փաշան, Սելամիյեն: Հայերով բնակեցված էին նաև Խաս գյուղը (Հասքյոյ), Գատը գյուղը (Քաղքքյոյ), Մաքրիգյուղը (Մաքրիքյոյ), Միջագյուղը (Օրթաքյոյ)[3]:

---

[1]Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, Երևան, 1974, էջ 315:

[2] Ubicini M. A., Letters sur la Turquie, Paris, 1854, p. 27.

[3] Ընդարձակ օրացոյց Ս. Փ. Ազգային Հիւանդանոցի Հայոց, Կ. Պոլիս, 1902, էջ 198:

Հայ բնակչության նման աճը կայսրության մայրաքաղաքում ուներ տարբեր պատճառներ, որոնցից գլխավորը տվյալ ժամանակահատվածում հատկապես գավառներում և կայսրության քաղաքներում կատարվող տեղաշարժերն էին, գյուղի սոցիալական քայքայումը և գյուղացիության աղքատացումը, որը, տեղահան անելով տասնյակ հազարավոր երիտասարդ կարող ուժեր, նրանց աշխատանքի էր մղում դեպի ծովեզրյա քաղաքները:

Կ. Պոլսի հայ գաղութն աճում էր զգալի արագությամբ: Արհեստի ու առևտրի զարգացման համար քաղաքում լայն հնարավորություններ կային: Թուրք-եվրոպական առևտուրը պահանջում էր գործիմաց, լեզուներ իմացող վաճառականներ: Իրենց վայելքներով տարված՝ թուրք իշխողներն արհամարհում էին առևտրական գործը՝ միակ կարևորը համարելով ձին և յաթաղանը, և այս պարագայում առևտուրը մնում էր հայ և հույն վաճառականների ձեռքում: Հետևաբար առևտրի և արհեստագործության զարգացման հնարավորությունները գավառից դեպի Կ. Պոլիս էին ձգում հայկական տարրի նոր քարավաններ: Մայրաքաղաք էին գալիս հիմնականում պանդուխտներ, օրամշակ բեռնակիրներ: Նրանք գալիս էին հաց ու աշխատանք որոնելու, հայոց պատրիարքարանից պաշտպանություն ու ապահովություն հայցելու: Պետք է փաստել, որ պատրիարքարանի առկայությունը սուլթանի նստավայրում քիչ դեր չխաղաց պոլսահայության համախմբման գործում:

Կ. Պոլիսը ազգաբնակչության սոցիալական կազմով, զբաղմունքի տեսակներով, մտավորականության առկայությամբ, մշակութային պահանջների մակարդակով, առերևույթ նմանվում էր եվրոպական քաղաքի՝ միշտ պահպանելով իր ասիական բնույթը: Գավառի հետ համեմատած, այստեղ մեղմացած էին ազգային ճնշումները: Եվրոպական բազմաթիվ դեսպանությունների առկայությունը Կ. Պոլսում, Օսմանյան Թուրքիայի քաղաքական ու տնտեսական կախումն այդ տերություններից, այս կամ այն կերպ կաշկանդում էին և թույլ չէին տալիս հպատակների հետ վարվել այնպես, ինչպես վարվում էին ծայրագավառներում:

Նկատելի էին գաղութահայության և գավառահայության ապրելակերպի, հատկապես քաղաքացիական դրության էական տարբերությունները, դրա համար էլ պատահական չէր, որ մտավորականությունը, առևտրականների ու արհեստավորների մեծ մասը, մշակներն ու բեռնակիրներն անընդհատ կենտրոնանում էին ծովամերձ քաղաքներում: Կ. Պոլիսը վերածվում էր արևմտահայ մշակույթի ամենախոշոր օջախի:

XIX դ. եվրոպական հետազոտողներից Մ. Ուբիչինին XVIII դարի վերջի և XIX դարի առաջին կեսի պոլսահայ համայնքը բաժանում էր չորս դասի՝ կղեր, սարաֆներ (սեղանավորներ), գրական և մասնագիտական դաս, արհեստավորներ ու առևտրականներ[4]:

Ինչպես նկատեցինք, Կ. Պոլսի հայկական գաղութը բաղկացած էր սոցիալական տարբեր դասերից, որոնք, ազգային ամբողջություն էին կազմում և էական դեր էին խաղում, մասնավորապես, Օսմանյան Թուրքիայի տնտեսական կյանքում:

Երկար ժամանակ օսմանյան պետության կարևոր զարկերակներն իրենց ձեռքում էին պահում պոլսահայ ամիրաները՝[5] հայ առևտրավաշխառուական կապիտալի այն ներկայացուցիչները, որոնք քիչ անց պետք է նահանջեին Օսմանյան Թուրքիայի նավահանգիստներում խարսխված եվրոպական կապիտալի ճնշման ներքո[6], որ պետք է ի հայտ գար նաև հետագա բարեփոխումների արդյունքում:

---

[4] Ubicini M. A., Letters on Turkey, part II, London, 1856, p. 310.

[5] «Ամիրա» բառը առաջացել է արաբերեն միր, էմիր բառերից, որը նշանակում է հրամանատար, իշխան և այլն: Արաբական խալիֆայությունում ամիրաներ են անվանվել զորահրամանատարները, կուսակալները: Օսմանյան կայսրությունում ամիրա պատվանունը տրվում էր սուլթանների պալատական քրիստոնյա, հայ արքունի պաշտոնյաներին՝ որպես կայսերական հաստատությունների վերակացուներ, վարկատուներ կամ մատակարարներ, Ստեփանյան Հ., Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, Երևան, 2011, էջ 185: Ամիրաների մասին տես՝ Barsumyan H. L., The Armenian Amira Class of Istanbul, Yerevan, 2007; Carmont P., Les Amiras: Seigneurs de l'Arme´nie ottomane, Paris, 1999.

[6] Հովհաննիսյան Ա., Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 1, Երևան, 1955, էջ 348:

Ամիրայական դասակարգը բաղկացած էր սեղանավորներից, մեծ վաճառականներից և պետական պաշտոնյաներից:

Ամիրաները գործում էին ոչ միայն Կ. Պոլսում, այլև կայսրության տարբեր գավառներում՝ վարկավորելով գլխավորապես վարչական վերնախավին՝ ի դեմս գավառական կուսակալ փաշաների (վալի): Զուտ ֆինանսական գործառնությունների առումով, ամիրաները հանդես էին գալիս որպես վաշխառու-չելեպիների[7] հաջորդներ, սակայն շատ ավելի լայն շառավիղներով, օսմանյան վարկային համակարգում՝ գործառութային լուրջ նշանակությամբ:

Օգտվելով այն հանգամանքից, որ մինչև Ղրիմի պատերազմի ավարտը (1856 թ.), սուլթանները եվրոպական պետություններից փոխառություններ չէին վերցնում, ամիրաները իրենք էին կատարում այդ գործարքները, տոկոսով վարկեր էին բաց թողնում այս կամ այն վաճառականին, առևտրական ընկերությանը, պետական գրասենյակներին, զանազան փաշաների, թուրք դեսպաններին, հաճախ անգամ սուլթանին, այս բնագավառում ամենայն հաջողությամբ մրցակցելով հրեա սեղանավորների հետ:

1850-60-ական թթ. թուրքերի, հույների ու սլավոնների կողքին մայրաքաղաքում ձևավորվեց նաև հայ պետական պաշտոնյաների նոր դաս՝ արևմտահայ էֆենդիները: Եթե մինչև 30-ականներն Օսմանյան Թուրքիայի պաշտոնյա էֆենդիների մեջ հայերի անուններ քիչ էին հիշատակվում, ապա 40-ականներից սկսած, Կ. Պոլսում, Զմյուռնիայում և նույնիսկ գավառական քաղաքներում տեղեր էին

---

[7] «Չելեպի» բառը թուրքական ծագում ունի և հին թուրքերենում «չելեպ» նշանակում է «աստված»: Ըստ Հ. Անասյանի, բառն ազնվականական տիտղոս ունեցող մի մակդիր էր, որ հին ժամանակ Թուրքիայում տրվում էր վերնախավի հարուստ մարդկանց, ընդհուպ մինչև սուլթանը: Ավելի ուշ շրջանում այդ մակդիրը կրել են մտավորականները և արքայական որոշ շնորհների հասած մարդիկ, Խաչատրյան Ս., Կոստանդնուպոլսի հայ ամիրայությունը (1750-1860-ական թթ.), Երևան, 2014, (թեկն. ատեն.), էջ 45-46: Հայտնի են ոչ միայն Կ. Պոլսի չելեպի մեծահարուստ-վաշխառուները, այլև մտավորականներ, որոնցից ամենանշանավորը XVII դարում հայագիտությանը քաջածանոթ Երեմիա Չելեպի Քյոմուրճյանն էր:

գրավում նաև էֆենդիները, որոնք բարձրանում էին գաղութահայ վաճառականների, ներքին ու արտաքին առևտրով զբաղվող հայ առևտրականների միջավայրից: Հայ էֆենդիները սակայն ծառայում էին օսմանյան բռնապետությանը:

Կ. Պոլսում աշխույժ էր ներքին առևտուրը, որի գերակշռող մասը կենտրոնացած էր հայ վաճառականների ձեռքում: Նրանք զբաղվում էին նախ՝ գավառից բերված գյուղատնտեսական մթերքների, ապա և տեղական արհեստների արտադրանքների վաճառքով:

Դարասկզբին արդեն հայ առևտրականները տիրապետում էին առևտրի եվրոպական մեթոդներին: Նրանք սերտ հարաբերություններ էին Վենետիկի, Հռոմի, Ամստերդամի, Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների հետ: Հնդկաստանից ներմուծում էին շալեր, համեմներ ու զոհարեղեն, Իրանից՝ կերպասներ, Դամասկոսից՝ բեհեզներ: Պոլսահայ վաճառականները Ֆրանսիայից, Իտալիայից բերում էին կերպասներ, վենետիկյան հայելիներ, ապակյա ճրագարաններ, գերմանական սաթ, որոնց մի մասը վաճառում էին Օսմանյան Թուրքիայում, մյուս մասը՝ Իրանում, Եգիպտոսում, Հարավային Ռուսաստանում: Ահա այս առևտրականներն էին, որոնք առևտրից հսկայական եկամուտներ ստանալով և տարածվելով Արևմտյան Եվրոպայում՝ դարձան թուրք-եվրոպական առևտրի միջնորդները[8]:

Վաճառական այս դասը արևելյան հումքը մերձեցնում էր եվրոպական արտադրությանը և դրանով նպաստում համաշխարհային ապրանքաշրջանառության ընդլայնմանը՝ վկայելով իր առաջադիմական նկարագրի մասին: Մինչև XIX դարի կեսերը պոլսահայ «եվրոպականացած» առևտրականները կապված էին ֆրանսիական, գերազանցապես իտալական շուկաների հետ[9]**:**

Անգլիայի տնտեսական հզորացումը մի կողմից, Ղրիմի պատերազմը մյուս կողմից, փոխեցին նախկին իրադրությունը: Պոլսահայ առևտրականները մեծ մասամբ զինվորագրվեցին Անգլիային՝ նրա

---

[8] Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, էջ 320:

[9] Հովհաննիսյան Ա., նշվ. աշխ., էջ 353:

ապրանքները տարածելով ողջ երկրով մեկ: Սկզբնական շրջանում նրանք հանդիսանում էին սոսկ միջնորդներ: Արդեն դարի երկրորդ կեսին նրանց մի մասը բնակություն է հաստատում եվրոպական քաղաքներում, մասնավորապես Լոնդոնում, Մանչեստրում, Լիվոռնոյում, Փարիզում և այլուր:

1861 թ. Մանչեստրի հայ վաճառականների թիվը հասնում էր 30-ի, որոնք կազմելով առևտրական ընկերություններ, միաժամանակ պետությունից թույլտվություն են ստանում հայկական եկեղեցի ունենալու, հայերեն գրքեր տպագրելու: 1863 թ. մի հիշատակարանում նշված է, որ Մանչեստրում այդ ժամանակ կային 25 խոշոր հայ առևտրականներ, իսկ Լիվոռնոյում՝ 6: Նրանք գաղթել էին Կ. Պոլսից, Զմյուռնիայից և Կեսարիայից[10]: Գաղթելով նախկին բնակավայրերից, նրանք պահպանում էին իրենց կապերը Օսմանյան Թուրքիայի հետ և միջնորդ օղակ դառնում թուրք-անգլիական առևտրի մեջ: Այդ վաճառականների «կեսը, - գրում է Մրմրյանը, - Կ. Պոլսեն և Զմյուռնայեն Մանչեսդր երթևեկողներ էին, մյուսը մնայուն կերպով հոն գործողներ՝ իբրև ներկայացուցիչ Կ. Պոլսի և Զմյուռնայի իրենց կեդրոնական տուներուն»[11]:

XIX դարի առաջին, առավել ևս երկրորդ կեսին, Կ. Պոլսի հայ ազգաբնակչության զգալի մասը և հիմնական դասը կազմում էր արհեստավորությունը: Արհեստավորների մեծ մասը Հայաստանից նախկինում գաղթած հայերն էին:

Օսմանյան Թուրքիայի վիճակագրական գրասենյակի հաղորդագրության համաձայն, XIX դարի երկրորդ կեսին Կ. Պոլսում ապրող հայերից 494-ը պետական պաշտոնյաներ էին, 35.979-ը՝ վաճառականներ, արհեստավորներ, խանութպաններ, 32.399-ը՝ ուսանողներ և աշակերտներ, 14.998-ը՝ անզբաղմունք մարդիկ[12]:

---

[10] Մրմրբեան Յ. Գ., Թուրքահայոց հին վաճառականութիւն ու վաճառականք, 1740-1890, Կ. Պոլիս, 1908, էջ 47:

[11] Նույն տեղում, էջ 53:

[12]«Արձագանք», Թիֆլիս, 1885, թիվ 10, սեպտեմբերի 8, էջ 143:

Բացի հոգևորականությունից, որը ներկայացնում էր եկեղեցին, մյուս բոլոր դասերը մտնում էին պետության կողմից ճանաչված էսնաֆությունների մեջ: Էսնաֆությունների՝ հայ արհեստավորական միավորված կազմակերպությունների թիվը դարասկզբին հասնում էր 65-ի, իսկ դարակեսին ավելի քան 100-ի: Հայտնի էին սեղանավորների, ոսկերիչների, չթագործների, հացագործների, շինանյութ պատրաստողների, հողաթափ կարողների, ժամագործների, ճոթավաճառների, կոշկակարների, բաղնիսպանների, խոհարարների, վարսավիրների և այլ արհեստով զբաղվողների միությունները[13]:

Կ. Պոլսի էսնաֆություններից ամենանշանավորը երկրում ու Եվրոպայում հայտնի ոսկերիչներն էին: Նրանց էսնաֆության մեջ էին համախմբված ոսկերիչները, ոսկեղենի վաճառականները, ակնավաճառները, արծաթեղենի առևտրով զբաղվողները:

Ֆրանսիացի ճանապարհորդ Թեոֆիլ Գոտյեն իր հրապարակախոսական գործերում հատուկ բաժիններ է հատկացրել պոլսահայ ոսկերիչների գործունեությանը, որոնց արտադրանքը շուկայում մրցակցության մեջ հաջողությամբ դուրս էր մղում եվրոպականին[14]:

Այս պատմաշրջանի համար հատկանշական է այն, որ էսնաֆությունները շատանալով, համախմբում էին միևնույն արհեստին կամ զբաղմունքին պատկանող հայ արհեստավորներին ու առևտրականներին:

XIX դարի երկրորդ քառորդից կառավարությունը, հատկապես Մահմուդ Բ-ն (1808-1839), փորձեց էսնաֆությունները «հպատակեցնել» պետությանը, սահմանել պետական միասնական գներ, արգելեց քմահաճ ձևով առևտուր անելը, մանավանդ երբ ներքին կռիվների հետևանքով, կայսրության տնտեսական քայքայման պահին, ապրանքավաճառները բարձր գներ էին դնում և դժվարացնում կյանքը երկրում՝ հատկապես մայրաքաղաքում: 1835-36 թթ. սուլթանը հրապա-

---

[13] Հայ գաղթաշխարհի պատմություն, հ. 2, Երևան, 2003, էջ 115:

[14] Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., Երևան, 1967, էջ 411:

բակում է էսնաֆություններին վերաբերող բազմաթերթ մի կանոնադրություն-օրենք, դրանով իսկ առևտրաարհեստագործական այդ միությունները վերցնում իր հսկողության տակ[15]:

Այսպիսով, XIX դարի թե՛ առաջին, և թե՛ երկրորդ կեսերին, Կ. Պոլսի հայ գաղթօջախի արհեստավորների և առևտրականների գերակշռող մեծամասնությունը համախմբված էր միությունների մեջ և հավաքաբար հանդես էր գալիս ազգի ներքին գործերը տնօրինելիս: «Եվ պետք է ընդունիլ, - գրում է Ա. Ալպոյաճյանը, - թե այն ատեն կներկայացնեին ավելի դասակարգերը, քան ազատ քաղաքացիական խումբերը, վասնզի արհեստապետություններ (էսնաֆ) զորավոր կազմակերպություն ունեին, և իրենց արհեստապետովը և արհեստապետական ժողովներովը (լոնճա օտասը) կներկայացներին տեսակ մը ինքնագլուխ վարչություններ և մատակարարություններ, որոնք հավաքաբար կկատարեին էսնաֆի մը ամբողջական ներկայացուցչի հանգամանքը: Հետևաբար, երբ ամեն էսնաֆ իր ներկայացուցիչը կունենար էսնաֆին լոնճայեն ընտրուած, արդեն բոլոր ազգը իր ներկայացուցիչը ունեցած կըլլար ազգային գործոց մեջ»[16]:

Հայերի նկատմամբ Օսմանյան կայսրության վարած քաղաքականության հետևանքն էր պանդխտությունն ու գաղթականությունը: Գաղթականության հետևանքով դատարկվեցին Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներ, առաջացան գաղութահայ նոր օջախներ: Քիչ վտանգավոր չէր պանդխտությունը, որի հետևանքով պակասում էր գավառահայ բնակչության թիվը, քայքայվում էր գյուղատնտեսությունը, աղքատանում էին հազարավոր ընտանիքներ: Պանդուխտները նրանք էին, ովքեր չկտրվելով հայրենիքից, ժամանակավորապես գնում էին օտար վայրեր՝ աշխատանք և վաստակ որոնելու և ապա հայրենիք վերադառնալու հույսով:

---

[15] Ղազարյան Հ., նշվ. աշխ., էջ 408-409:

[16] Ալպոյաճյան Ա., Ազգային սահմանադրությունը: Իր ծագումը և կիրառությունը: «Ընդարձակ օրացոյց ս. Փրկչի հիվանդանոցի հայոց», էջ 202:

Ազգային ժողովի 1860 թ. տվյալներով Կ. Պոլսում 15 հազար հայ պանդուխտներ էին ապրում[17]: 1882 թ. Ա. Թոխմախյանը պոլսահայ պանդուխտների թիվը 40 հազար է հաշվում[18]:

Արևմտյան Հայաստանից Կ. Պոլիս գաղթող հայ պանդուխտները զբաղվում էին օրավարձու մշակությամբ, բեռնակրությամբ կամ ջրկիրությամբ: Սակայն Կ. Պոլսի մոլեռանդ մահմեդական վերնախավը դժվարությամբ էր գործ տալիս հայ օրամշակներին, կասկածում նրանց վրա, գերադասում թույլ ու քիչ աշխատունակ հավատակիցներին, քան պակաս վարձ պահանջող պանդուխտներին: Փաստորեն կրոնական խտրականությունը թափանցում էր նաև այս բնագավառ:

1840-60-ական թթ. Օսմանյան Թուրքիայի առափնյա քաղաքներում, մասնավորապես մայրաքաղաքում կենտրոնացած պանդուխտներն էին, որ արտահայտում էին հայ գավառի տրամադրությունները: Պանդուխտներն անմիջականորեն կրել էին այն քայքայիչ ազդեցությունը, որն ունեցել էր արտասահմանյան կապիտալը Օսմանյան Թուրքիայի տնտեսության վրա: Նրանք ավելի շատ էին տուժել օտար բռնակալների ճնշումներից, ավելի հաճախակի հարստահարվել, այդ իսկ պատճառով էլ նրանց համար ավելի անտանելի էր օսմանյան լուծը[19]:

Պանդուխտներն ամեն կերպ փորձում էին ազգային իշխանությունների ուշադրությունը բևեռել գավառահայության սոցիալ-տնտեսական կյանքում առկա խնդիրների լուծման վրա: Նրանց ճնշման ներքո էր, որ կազմվեց գավառական հարստահարություններն ուսումնասիրող խորհուրդը, Բ. Դռանն ուղղվեցին բազմաթիվ բողոքագրեր, որոնցում նկարագրվում էին այն բոլոր զրկանքներն ու հարստահարությունները, որ կրում էին գավառահայերը: «Կ. Պոլսո հայ գաղթականությունն է, որ ամեն պարագային մեջ, - գրում է

---

[17] Հովհաննիսյան Ա., նշվ աշխ., էջ 360:
[18] «Մշակ», 1882, թիվ 160, սեպտեմբերի 2, էջ 3:
[19] Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, էջ 324:

«Արձագանքը», - ցույց տված է, թե կա հայ ազգություն մը, որ գիտե գործել յուր անդամոց համար»[20]:

Պանդուխտները 1860-1880-ական թթ. հայ հասարակական-քաղաքական շարժումների ուժեղացման գործում էական դեր էին կատարում, հուսալի և ամուր հենարան դառնալով գավառահայության շահերն արտահայտող ազգային առաջադեմ մտավորականությանը, շատ անգամ պայքարելով հոգևորականության և վաշխառուների դեմ:

Պանդուխտները, դառնալով Օսմանյան Թուրքիայի, մասնավորապես արևմտահայության XIX դարի երկրորդ կեսին վերապրած խորը տնտեսական ճգնաժամի հայտարարը[21], արտահայտելով բախտակիցների քաղաքական ու տնտեսական շահերը, հենք դարձան դեմոկրատական հոսանքի ձևավորման համար:

Եվրոպական կապիտալի մուտքը Օսմանյան Թուրքիա, մի կողմից սաստկացնում էր սոցիալական ճնշումն ու հարստահարությունները Արևմտյան Հայաստանում, բնաշխարհից կտրում հայ ազգաբնակչությանը, ստեղծում բանվորական հսկա պահեստաբանակ, մյուս կողմից պատճառ դառնում ազգային արդյունագործական ձեռնարկությունների քայքայմանը:

Այսպիսով, Կ. Պոլսում՝ արևմտահայ այս խոշոր գաղթօջախում էին խարսխված աստիճանաբար մարող ամիրայությունը, նրա դեմ խոյացող բուրժուազիան, էսնաֆությունների մեջ ընդգրկված ու նրանցից դուրս եղած արհեստավորները, տեղական արտադրանքի առևտրականները, բազմահազար հին ու նոր պանդուխտներ:

---

[20] «Արձագանք», 1886, թիվ 20, մայիսի 25, էջ 289:

[21] Հովհաննիսյան Ա., նշվ աշխ., էջ 361:

SALVINE MARKOSYAN
(IAE)

THE CHARACTERISTICS OF THE CONSTANTINOPLE ARMENIANS' SOCIAL CLASS IN THE 19th CENTURY.

In the 19th century the Armenian population of Constantinople was composed of different social classes, which were the integral part of the nation and had their significant role, specifically in the economic life of the Ottoman Turkey. The increasing number of the colonial population in Constantinople was creating an opportunity for developing craftsmanship and trade.

In this article we have elaborated to show the differences of the social classes of the Constantinople Armenians in the 19th century and combined the socioeconomic life of the Western Armenians in the Ottoman Turkey with the current period.

The main goal of this article is the revelations of the most important issues, which are the following

- ✓ To reveal the characteristics of the social class in the Armenian community in Constantinople
- ✓ To show the importance of the Constantinople in the Western Armenians life
- ✓ To present the preconditions of the population growth in Constantinople
- ✓ To describe the Constantinople Armenian craftsmanship
- ✓ To reveal the role of the pilgrims in the defense of the province Armenians' interests

Our goal also involved to prove the fact that in the 19th century Constantinople was one of the most important centers for the Western Armenians: although the life of the Armenians of Constantinople was with contradictions and political discriminations, which mostly disturbed their development both economically and socially.